ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2026թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 463-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 463-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող շենքերը և շինությունները, առանց Երևան քաղաքի ավագանու նախնական համաձայնության, Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են քանդվել (ապամոնտաժվել), եթե դրանց քանդումը (ապամոնտաժումը) իրականացվում է հանրային անվտանգության ապահովման նպատակով կամ պայմանավորված է քաղաքաշինական ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 463-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման արդյունավետության բարձրացման, հանրային անվտանգության ապահովման, քաղաքաշինական ծրագրերի անխափան իրականացման և համայնքային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Գործնականում առաջանում են դեպքեր, երբ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերը և շինությունները գտնվում են այնպիսի վիճակում կամ պայմաններում, որ դրանց քանդումը (ապամոնտաժումը) անհրաժեշտ է հանրային անվտանգության ապահովման նպատակով: Միաժամանակ, համայնքի կողմից իրականացվում են մի շարք քաղաքաշինական ծրագրեր, որոնց իրականացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում քանդելու (ապամոնտաժելու) համայնքային սեփականություն հանդիսացող համապատասխան գույքը: Նման դեպքերում գույքի քանդման (ապամոնտաժման) վերաբերյալ յուրաքանչյուր առանձին որոշման համար Երևան քաղաքի ավագանու նախնական համաձայնություն ստանալու անհրաժեշտությունը կարող է հանգեցնել անհարկի ձգձգումների և խոչընդոտել օպերատիվ կառավարչական որոշումների ընդունմանը:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ այն դեպքերում, երբ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի քանդումը (ապամոնտաժումը) պայմանավորված է հանրային անվտանգության ապահովմամբ կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման

անհրաժեշտությամբ, համապատասխան գույքի քանդման (ապամոնտաժման) վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել Երևանի քաղաքապետի կողմից՝ առանց Երևան քաղաքի ավագանու յուրաքանչյուր առանձին դեպքի վերաբերյալ նախնական համաձայնության՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:

Նախագծով նախատեսվող կարգավորումը չի ենթադրում համայնքային սեփականության նկատմամբ քաղաքապետին անսահմանափակ տնօրինման լիազորության վերապահում, այլ ուղղված է օրենքով և այլ իրավական ակտերով թույլատրելի դեպքերում գույքի քանդման (ապամոնտաժման) վերաբերյալ օպերատիվ կառավարչական որոշումների ընդունման հնարավորության ապահովմանը:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել համայնքային գույքի կառավարման գործընթացների առավել արդյունավետ կազմակերպում, բարձրացնել վարչարարության օպերատիվությունը, ինչպես նաև ապահովել հանրային անվտանգության և համայնքային շահերի առավել արդյունավետ պաշտպանությունը՝ պահպանելով գործող օրենսդրությամբ սահմանված իրավական երաշխիքները:

Որոշման նախագծի ընդունումը լրացուցիչ ծախսեր չի առաջացնում Երևանի համայնքի բյուջեի համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ